ճաբ. ընդունում է Թոլգոմ առ-ը, որ ոտ-գում է Թոլգոմ գեղը. Ծղալտիտրա առ-ը, որոնք ոտոգում են Կապարիա գեղը: Պոր-տայի եւ Բերդայի մէջ են Օպիզա[1], Օպիզ-նալա, Դավկատուռ, Գվերդա գեղերը եւ Դաբա մացրան:

Մինչեւ վերջին պատերազմը Շաւշէ-տում հայ քրիստ. գեղեր էին Օքրոբավիտը, Սաթէլը Վ. եւ Ս., Մամանելիս, Բարտ. իսկ Իմերխեւում՝ Փխիկուր եւ Դովլաթ. ուրիշ ոչ մի քրիստ. ժողովուրդ: Սաթելել, Մա-մանելիս, Փխիկուր եւ Դովլաթ հայ-կաթո-լիկներ էին ապրում եւ դրանք շատ հին էին այդ վիճակում:

Բերդայի, Պորտայի ափերում գտնուած տաճարների արձանագրութիւնը նոյնպէս Արդանուչի, Փենեգի, Թաուսքարի տաճար-ների արձանագրութիւնները վրացերէն է եւ այդ արձանագրութիւններով շատերը կարծում են, թէ Ճորոխի Աւազանի Շաւ-շէտ, Արդանուչ, Ցրիա, Փխունջուր, Պալ-խար-Բահլ, Օլթի եւ նոյնն իսկ Թորդում ապրել են երբ եւ իցէ վրացիներ: Վրացիները ապրել են եւ ճնշիչ վրացական տարր նկա-տելի է Իմերխեւ, Մաճխիխել, մանաւանդ Աչարա վտակների Աւազանում. իսկ մնա-ցեալ վտակների ափերում վրացական ազ-

---

1 Օպիզայի վանքը, տաճարը եւ շրջակայքի շինու-թիւնները նրա ճոխութիւնն են վկայում թ—ԺԲ դարե-րում: Այս կողմերումն էլ կան նախապատմական շրջանի վիթխարի շէնքերի հետքեր: